



**ՀԱՉԱՐԱՄՅԱԿԻ
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ
ՀԻՄՆԱԳՐԱՍ-ՀԱՅԱՍՏԱՆ**

ՏԱՐԵԿԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՇՎԵՏԿՈՒԹՅՈՒՆ

ՀՄՀ-ՀԱՅԱՍՏԱՆ

2008թ. հոկտեմբեր

1. Ֆինանսական տարվա ընթացքում Միջկառավարական համաձայնագրի իրականացման ընդհանուր առաջընթաց

Նկարագրեք նախորդ 12-ամսյա ժամանակահատվածում (2007թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2008թ. սեպտեմբերի 30-ը) Միջկառավարական համաձայնագրով սահմանված նպատակների նվաճման առումով տեղի ունեցած առաջընթացը՝ (ծրագրի և/կամ բաղադրիչների կտրվածքով): Նկարագրեք նաև մինչ օրս տեղի ունեցած առաջընթացը: (Օրինակ, 2007թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2008թ. սեպտեմբերի 30-ը ժամանակահատվածում համայնքների զարգացման ծրագրի շրջանակներում ուսուցանվել է 10,000 ֆերմեր: Այսպիսով, 2008թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Միջկառավարական համաձայնագրի իրականացման ընթացքում ուսուցանված ֆերմերների ընդհանուր թիվը կազմում է 23,000): Տվյալ բաժինը կարող է նախագիծ հանդես գալ և լրացնել ՑՀԱ-ի եռամսյակային հաշվետվությունը՝ ծրագրի առաջընթացի համառոտ նկարագրությամբ, ներառյալ ՑՀԱ-ում չարտագրված օգուտը:

Միջկառավարական համաձայնագրի երկրորդ տարվա ընթացքում ՀՄՀ-Հայաստանի կողմից իրականացված աշխատանքները համապատասխանում են Միջկառավարական համաձայնագրով սահմանված նպատակներին՝ 15 մլն. ԱՄՆ դոլարի համարժեք հատկացումների ընդհանուր գումարով: ՀՄՀ-Հայաստանը մի շարք զգալի ձեռքբերումներ է ունեցել: Գյուղական ճանապարհների վերանորոգման ծրագրի շրջանակներում Հայաստանի հարավ-արևմտյան շրջանում 24.5 կմ ճանապարհահատվածի վերանորոգման աշխատանքները մոտենում են ավարտին: Ճանապարհահատվածի պաշտոնական բացումը ծրագրավորված է 2008թ. դեկտեմբերին: Միևնույն ժամանակ, արդեն իսկ սկսվել և շինարարության փուլում են գտնվում առաջին փաթեթում ընդգրկված ճանապարհաշինարարական պայմանագրերի աշխատանքները, որոնք նախատեսում են 273 կմ ճանապարհահատվածի վերանորոգում 51 մլն. ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով: Ոռոգվող գյուղատնտեսության ծրագրի շրջանակներում ավատվել են 4 գյուղական համայնքներում իրականացվող երրորդ կարգի ջրանցքների շինարարական աշխատանքները: Մինչև 2008թ. դեկտեմբերը Հայաստանի բոլոր մարզերի շինարարական փուլին պատրաստ կլինեն 6 մայր ջրանցքների, 7 ինքնահոս համակարգերի և 18 պոմպակայանների վերջնական նախագծերը: Շինարարական փուլի սկիզբը նախատեսված է 2009թ.: Ջրից դեպի շուկա բաղադրիչի շրջանակներում, որը ՈԳԾ մասն է կազմում, մինչ օրս ուսուցանվել են ավելի քան 15,000 ծրագրի շահառուներ ջրի ներտնտեսային կառավարման և բարձրարժեք գյուղատնտեսական արտադրանքի ուսուցման թեմաներով: Տվյալ ծրագրի շրջանակներում ստեղծվել են 52 փորձադրական տնտեսություն, ինչպես նաև բաշխվել է ավելի քան 100 գյուղատնտեսական վարկ, որոնց ընդհանուր գումարը կազմում է 1,500,000 ԱՄՆ դոլար:

Գյուղական ճանապարհների վերանորոգման ծրագիր (ԳՆՎԾ)

Միջկառավարական համաձայնագրի երկրորդ տարվա ընթացքում ԳՆՎԾ-ով մեկնարկվել են ծրագրում ընդգրկված գյուղական ճանապարհների շինարարական աշխատանքները: Իսկ Արագածոտնի և Շիրակի մարզերով անցնող Գ-17 Արմավիր-Իսահակյան-Գյումրի ավտոճանապարհի շինարարական աշխատանքները մոտենում են ավարտին: Վերանորոգված հատվածի ընդհանուր երկարությունը 24.5 կմ է: Կապալառու հանդիսացող «Դորոժնիկ» ՍՊԸ-ն արդեն ավարտել է ասֆալտա-բետոնե ծածկի աշխատանքները բոլոր հատվածներում, իսկ ընդհանուր առմամբ աշխատանքները կավարտվեն 2008թ. դեկտեմբերին: Վերանորոգված ճանապարհից անմիջական օգուտ կստանան 7 գյուղական համայնքների ընդհանուր թվով 3,481 հոգի: Պայմանագրի ընդհանուր արժեքը կազմում էր 1,502,320, 639 ՀՀ դրամ (մոտավորապես 4.5 մլն. ԱՄՆ դոլար):

2008թ. օգոստոսին ՀՄՀ-Հայաստանը շինարարական պայմանագրեր է կնքել 273 կմ ընդհանուր երկարությամբ առաջին փաթեթում ընդգրկված գյուղական ճանապարհների վերանորոգման համար: Առաջին փաթեթում ընդգրկված ճանապարհահատվածները ներառում են Շիրակից բացի Հայաստանի բոլոր մարզերը: Ընդհանուր առմամբ շահառու համայնքների թիվը 73 է, որոնց ընդհանուր բնակչությունը 170,000 հոգի է կազմում: Հայաստանի Հանրապետության կառավարությունը լրացուցիչ 16,800,000 ԱՄՆ դոլարի չափով համաֆինանսավորում է տրամադրել առաջին փաթեթում ընդգրկված ճանապարհահատվածների վերանորոգման համար: Նախատեսվում է շինարարությունը ավարտել մինչև 2010թ. հունիսը:

ՀՄՀ-Հայաստանը, ընտրված ֆինական Ֆինրոուդ կազմակերպության միջոցով, ավարտել է կատարման վրա հիմնված ճանապարհների ընթացիկ պահպանման գոյություն ունեցող համակարգի ուսումնասիրությունը, որի նպատակն էր բարելավել գործող համակարգը: Ֆինրոուդ կազմակերպությունը հետազոտել է շահագործման քաղաքականությունը և առաջարկություններ է ներկայացրել հիմնվելով միջազգային լավագույն փորձի վրա: Այդ առաջարկությունները հիմնականում վերաբերվում էին պայմանագրերի մոդելների և վերահսկողության ուժեղացմանը, գնումների պահանջներին և ճանապարհների եղանակային պայմանների տեղեկատվության նոր համակարգին:

Տեխնիկա-տնտեսական հիմնավորվածության ուսումնասիրությունը և նախագծումը իրականացնող կազմակերպությունը՝ շվեդական Սվեքո Ինտերնեյշնլ կազմակերպությունը, արդեն ավարտել է երկրորդ և երրորդ փաթեթների նախագծային փաստաթղթերի և հաշվետվությունների մշակումը: Տնտեսական շահութաբերության ցուցանիշին (12.5%) համապատասխանող երկրորդ փաթեթում ընդգրկված ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 210.5 կմ և երրորդ փաթեթում ընդգրկված ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 25.08 կմ: Այսպիսով, ներկա դրությամբ ՀՄՀ-Հայաստանը ունի պատրաստի նախագծեր 235.58 կմ ճանապարհահատվածների համար՝ ի լրումն ներկայումս շինարարության փուլում գտնվող 297.4 կմ ճանապարհահատվածների:

Ոռոգվող գյուղատնտեսության ծրագիր (ՈԳԾ)

ՈԳԾ շրջանակներում իրականացվող շինարարական առաջին ծրագիրն արդեն ավարտվել է: 2008թ. հունվարի 14-ին ՀԱՀ-Հայաստանը մեկնարկեց երրորդ կարգի ջրանցքների վերանորոգման աշխատանքները հանրապետության չորս համայնքներում: Շինարարական աշխատանքները ընթացան չընդատելով ոռոգման սեզոնը, որը խիստ կարևոր էր տվյալ համայնքների ֆերմերների համար: Աշխատանքների արդյունքում ՀԱՀ-Հայաստանը ապահովեց ոռոգման ջրի հուսալի մատակարարում 460 հեկտար հողատարածքներին 4 համայնքներում՝ վերանորոգելով 6.5 կմ ընդհանուր երկարությամբ երրորդ կարգի ոռոգման ջրանցքներ: Ծրագիրը փորձնական էր համարվում, և այն հնարավորություն կտա ՀԱՀ-Հայաստանին հետագա ծրագրերում կիրառելու ձեռքբերված փորձը: Կապալառուն կիրականացնի հնարավոր թերությունների վերացումը մեկ տարվա ընթացքում:

ՈԳԾ-ի համար Միջկառավարական համաձայնագրի երկրորդ տարվան հատկանշական էր լարված աշխատանքը ոռոգման սխեմաների տեխնիկա-տնտեսական հիմնավորվածության ուսումնասիրության ուղղությամբ, ինչպես նաև նախնական և վերջնական նախագծերի մշակման և հաստատման ուղղությամբ: Մինչև 2009թ. պետք է մասնավորապես ավարտի հասցվեն մայր ջրանցքների, ինքնահոս համակարգերի և պոմպակայանների վերջնականա նախագծերը: Հետևաբար, հաջորդ տարվա ընթացքում կազդարարվի հսկայական շինարարական աշխատանքների մեկնարկը:

«Հայջրնախագիծ» ինստիտուտը ընտրվել է իրականացնելու 6 մայր ջրանցքների վերջնական նախագծումը: ՀԱՀ-Հայաստանը և ՀՄԿ-ի «Յաքոբս» ՍՊԸ ինժեներական կազմակերպությունը սերտորեն համագործակցում էին խորհրդատուի հետ, փորձելով մայր ջրանցքների վերանորոգման հարցում հնարավորինս արդյունավետ լուծումներ առաջարկել՝ հաշվի առնելով ժամանակակից տեխնոլոգիաները և միջազգային փորձը: Արդյունքում հայտարարվեց մայր ջրանցքների առաջին փաթեթի շինարարական աշխատանքների (Արզնի-Շամիրան ջրանցքի 4.2 կմ հատված, բոլոր 6 ջրանցքների հիդրոտեխնիկական կառույցներ, ինչպես նաև տորկրեդային տեխնոլոգիաների փորձարկման աշխատանքներ) մրցույթի հրավերը և մինչև 2009թ. կընտրվի շինարարական կազմակերպությունը: Մայր ջրանցքների երկրորդ փաթեթի աշխատանքների մրցույթը կհայտարարվի 6 ամիս հետո: Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ փաթեթների համար նախապատրաստվել են համապատասխանորեն մշակված բնապահպանական կառավարման պլաններ, որոնք մշակվում են ՀԱՀ-Հայաստանի ցանկացած նմանատիպ ենթակառուցվածքի բաղադրիչին զուգընթաց:

«Հայջրնախագիծ» ինստիտուտը ընտրվել էր նաև իրականացնելու յոթ ջրամբարների տեխնիկա-տնտեսական հիմնավորվածության ուսումնասիրության պայմանագիրը, որի ընդհանուր արժեքը 210,000 ԱՄՆ դոլար էր կազմում: Ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ առաջարկվող 7 ջրամբարներից ոչ մեկը տարբեր տեսակի տեխնիկական և տնտեսական պատճառներից ելնելով ենթակա չէ վերանորոգման կամ կառուցման: Միայն Արզնի ջրամբարը համապատասխանում է տնտեսական շահութաբերության ցուցանիշի համար սահմանված շեմին (12.5% կամ բարձր): Մնացած ջրամբարների՝ Լիճքի, Վարդենուտի, Լեռնարոտի, Բագրավանի, Կափսի և Արթիկի ջրամբարների տնտեսական շահութաբերության ցուցանիշները

կամ ցածր են կամ սահմանային ի լրումն տարբեր տեսակի այլ տեխնիկական թերությունների, որոնց շարքին է պատկանում ոչ բավարար հիդրոլոգիական պայմանները և բարդություններ կայացնող տեղայնքը, որի արդյունքում շինարարական աշխատանքների արժեքը ավելանում է: Ինչ վերաբերվում է Արգիճի ջրամբարին, որի տնտեսական շահութաբերության ցուցանիշը բարձր է, հոսունության ռիսկը միջինից բարձր է հաշվարկվել, ինչը կարող է զգալի բացասական ազդեցություն ունենալ ջրի կուտակմանը ջրամբարում: Հիմնվելով ուսումնասիրության արդյունքների վրա որոշվեց կրճատել ջրամբարները ՀԱՀ-Հայաստան ծրագրից:

ՀԱՀ-Հայաստանի ծրագրով սկզբնապես նախատեսվել էր վերականգնել 18 ինքնփոս համակարգ: Կապալառուները՝ «Հայգյուղշիննախագիծ ինստիտուտ» (Հայաստան), «Ջրտուրք», «Ջրարբի» և «Ջինջ» համատեղ ձեռնարկությունն է և «Հայջրնախագիծ» ինստիտուտը Միջկառավարական համաձայնագրի իրականացման երկրորդ տարվա ընթացքում աշխատել են նախնական նախագծերի վրա և մինչ 2009թ. կներկայացնեն ինքնահոս համակարգերի վերջնական նախագծերը: ՈԳԾ-ում ընդգրկված ինքնահոս համակարգերը գտնվում են Հայաստանի 10 մարզերից 6-ում. Արարատում, Արմավիրում, Լոռվա մարզում, Արագածոտնի, Գեղարքունիկի և Շիրակի մարզերում՝ ընդհանուր 4,750 հեկտար ոռոգվող հողատարածքներում:

ՀԱՀ-Հայաստան ծրագրով սկզբնական փուլում նախատեսվում էր 68 պոմպակայանի վերանորոգում: Կապալառուն՝ ԲիԱրել ֆրանսիական կազմակերպությունը, Միջկառավարական համաձայնագրի իրականացման երկրորդ տարվա ընթացքում աշխատել է նախնական նախագծերի ուղղությամբ, իսկ պոմպակայանների վերջնական նախագծերը կներկայացնի մինչև 2009թ.: ՈԳԾ-ում ընդգրկված պոմպակայանները գտնվում են Հայաստանի 10 մարզերից 6-ում. Արարատում, Արմավիրում, Արագածոտնի, Գեղարքունիկի, Տավուշի և Սյունիքի մարզերում՝ ընդհանուր 31,470 հեկտար ոռոգվող հողատարածքներում:

ՀԱՀ-Հայաստանը տրամադրել է աշխատանքների առաջին պատվերը Երրորդ կարգի ջրանցքների նախագծման և վերահսկման Խորհրդատուին՝ Ակադեմիկ Վ.Ի.Եգիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ (Հայաստան), WYG Int'l (ՄԹ), Ջեն Բնասալթ (Հայաստան) կոնսորցիումին: Խորհրդատուն սկսել է 27 գյուղական համայնքներում 72 կմ ընդհանուր երկարությամբ երրորդ կարգի ջրանցքների նախագծային աշխատանքները: Ընդհանուր առմամբ նախատեսվում է մշակել մինչև 500 կմ երրորդ կարգի ջրանցքների հատվածների նախագծեր: MWH Americas (ԱՄՆ) ընկերությունը իրականացրել է Արարատյան հարթավայրի գերխոնավ տարածքների բնապահպանական/հիդրոլոգիական ելակետային ուսումնասիրություն, որի նպատակն էր հետազոտել դրենաժային ենթակառուցվածքի բնապահպանական և տեխնիկական ելակետային վիճակը: Ուսումնասիրությունը ներառում էր հիդրոլոգիական և բնապահպանական գնահատում, իրավական և ղեկավարման հիմնահարցեր, ինչպես նաև տնտեսական, սոցիալական և առողջության գնահատում:

Միջկառավարական համաձայնագրի իրականացման երկրորդ տարվա սկզբին պարզ դարձավ, որ ծրագիրը պետք է անդրադառնա վերջին երկու տարիների ընթացքում տեղի ունեցած արտարժույթի արժեզրկման և շինարարական աշխատանքների գնաճի հետ կապված խնդիրներին: ՀԱՀ-Հայաստանը և ՀՄԿ-ն նախաձեռնեցին ՈԳԾ-ի վերանայումը, որի նպատակն էր կրճատել ծրագրի բաղադրիչները և համապատասխանացնել աշխատանքների ծավալը

Միջկառավարական համաձայնագրով նախատեսված բյուջեին: Ծրագրի վերանայման արդյունքում գնահատվեցին ծրագրի առանձին բաղադրիչները՝ տնտեսական զարգացման վրա իրենց առավելագույն ազդեցության տեսանկյունից, ինչպես նաև համայնքային շրջաններում աղքատության կրճատման տեսանկյունից: ՀԱՀ-Հայաստանը ստիպված էր առաջարկել կրճատել ջրամբարների վերանորոգման բաղադրիչը; վերանայված մոտեցումը պետք է կիրառվի նաև մայր ջրանցքներին, պետք է կրճատվի նաև վերանորոգվող և կառուցվող ինքնահոս համակարգերի և պոմպակայանների քանակը:

Դրական տեսակետից, ծրագրի վերանայումը զգալի չի փոխել ծրագրի ընդհանուր ազդեցությունը: ՈԳԾ-ի անմիջական շահառուների թիվը կկազմի 106,161 հոգի 286 համայնքներում, որոնց ընդհանուր բնակչությունը 473,360 հոգի է կազմում, որոնցից 244,71 հոգին իգական սեռի ներկայացուցիչներ են (համաձայն Միջկառավարական համաձայնագրով սահմանված 138,309 շահառուի 362 համայնքներում): Անկախ ծրագրի ծավալների կրճատումից, ծրագրի ազդեցության ենթակա համայնքների և ջրօգտագործողների փոփոխությունը կրկին զգալի քիչ է (24 և համապատասխանաբար 21%), ինչը մատնանշում է ՀԱՀ-Հայաստանի ձգտումը վերանայված ծրագրի միջոցով ներգրավելու հնարավորինս շատ համայնքներ և ջրօգտագործողներ:

Ջրից դեպի շուկա (ՋԴՇ)

Հաշվետու ժամանակաշրջանում Ջրից դեպի Շուկա ծրագրի խորհրդատու ԷյՍԻԴԻԱ/ՎՈԿԱ կազմակերպությունը հսկայական արդյունքների է հասել: Կազմակերպությունը հասել է ծրագրի հիմնական թիրախներին, որոնք են՝ ուսուցանված ֆերմերների թիվը, ստեղծված ցուցադրական տնտեսությունների թիվը, ինչպես նաև գյուղատնտեսական ձեռնարկությունների թիվը, որոնց խորհրդատվություն է տրամադրվել իրենց գործունեության ոլորտների բարելավման ուղղությամբ:

Ուսուցման բաղադրիչի շրջանակներում ջրի ներտնտեսային կառավարման դասընթացներին մասնակցել են 13,123 ֆերմեր, իսկ բարձրարժեք գյուղատնտեսության թեմայով դասընթացներին մասնակցել են 2,985 ֆերմեր: Ուսուցանման մոդելներում ներառված էին այնպիսի թեմաներ, ինչպիսիք են՝ թունաքիմիկատների անվտանգ և արդյունավետ օգտագործումը, ձեռքբերումը, փոխադրումը և պահպանումը, վնասատուների դեմ պայքարը, օրգանական գյուղատնտեսությունը և հողի բերրիության միասնական կառավարումը: Ծրագրի շրջանակներում ջրի ներտնտեսային կառավարման և բարձրարժեք գյուղատնտեսության թեմաներով ուսուցանվել են 15,000-ից ավել ֆերմերներ: Դասընթացները անց են կացվել հանրապետության բոլոր 10 մարզերում:

Ներկայումս ՀԱՀ-Հայաստանը ունի 35 ՋՆԿ և 53 ԲԳ ցուցադրական տնտեսություններ, որոնց ստեղծման նպատակն էր ցուցադրել բաց դաշտերում, տնամերձ հողատարածքներում և ջերմոցներում ոռոգման նոր համակարգերը և տեխնոլոգիաները, ինչպես նաև ցուցադրել բնապահպանական տեսանկյունից կենսունակ բարձրարժեք գյուղատնտեսության լավագույն փորձը, ինչպիսիք են մշակաբույսերի տնկումը, պարարտացումը, սրսկումը, էտումը, մոլախոտերի դեմ պայքարը և մշակումը: Ցուցադրական տնտեսություններում կազմակերպվում են ֆերմերների դասընթացները: Ընդհանուր առմամբ ծրագրի շրջանակներում ստեղծվել է 128 ցուցադրական տնտեսություն:

Ջրից դեպի Շուկա ծրագրի հետքերքահավաքային մշակման և մարքեթինգի բաղադրիչի (ՅՄՍ) հիմնական նպատակն էր աջակցության տրամադրումը գյուղատնտեսական ոլորտին, վերամշակող ձեռնարկությունների ոլորտին, ինչպես նաև միջոլորտային աջակցության տրամադրումը: Աջակցությունը ներառում էր բիզնեսի և կառավարման ոլորտի խորհրդատվության տրամադրումը անհատ կազմակերպություններին, պատվիրատու կազմակերպությունների համար շուկայի նոր հնարավորությունների ստեղծումը, սննդամթերքի անվտանգության և հիգիենայի թեմայով դասընթացների անցկացումը և այլն: ՅՄՍ աջակցության ռազմավարությունը և մոտեցումները վերանայվել են և առավել համապատասխանեցվել պատվիրատուի կարիքներին և ավելին ուղղվել գործնական աջակցությանը: Շուկայի մասին տեղեկատվության հասանելիությունը բարելավելու նպատակով, խորհրդատու նախաձեռնել է տեղական, տարածաշրջանային և միջազգային շուկաների գյուղատնտեսական արտադրանքների ընդգրկում տեղեկատվական բազայի ստեղծումը: Առաջնայնությունը կտրվի շուկայական տեղակատվության համակարգի զարգացմանը, որը կաջակցի մթերքների տեղափոխմանը ֆերմաներից տեղական շուկաներ, մթերքների արտահանմանը, ինչպես նաև վերամշակող ոլորտին իրենց հումքի մատակարարմանը: Այս տարվա ընթացքում աջակցություն է ցուցաբերվել 60 գյուղատնտեսական կազմակերպություններին:

Գյուղատնտեսական վարկերի բաղադրիչ

Երկրորդ տարվա ընթացքում ՅՄՅ-Յայաստանը մեկնարկեց և հաջողությամբ ավարտեց գյուղատնտեսական վարկային ծրագրի առաջին փուլը: 2008թ. ապրիլի 9-ին ՅՄՅ-Յայաստանը վարկային համաձայնագրեր ստորագրեց երկու բանկերի և երկու ունիվերսալ վարկային կազմակերպությունների հետ, որոնք են «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ը, «Յայբիզնեսբանկ» ՓԲԸ-ը, «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ-ը և «Նոր Յորիզոն» ՈՒՎԿ ՍՊԸ-ն: Ծրագրի շրջանակներում 1,500,000 ԱՄՆ դոլարի վարկեր կտրամադրվեն: 2008թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ընտրված բանկերը և ունիվերսալ կազմակերպությունները ամբողջովին հատկացրել են հախատեսված 1,500,000 ԱՄՆ դոլարի համարժեք գումարը՝ ֆինանսավորելով 125 վարկ: Վարկերի միջին չափը կազմում է 3,7 միլիոն ՅՅ դրամ (մոտավորապես 12,200 ԱՄՆ դոլար), իսկ միջին տոկոսադրույքը կազմում է 9%: 125 վարկից 115-ը տրամադրվել են անհատ ֆերմերներին, որոնք մասնակցել էին Ջրից դեպի Շուկա ծրագրի շրջանակներում կազմակերպված դասընթացներին: Վարկերի օգտագործման նպատակները տարբեր են. անասնաբուծություն, պտղատու և խաղողի այգիների ստեղծում և բարելավում, ջերմոցների վերանորոգում և կառուցում և այլն: Վարկային ծրագրի վարչարարական քաղաքականության և ընթացակարգերի ձեռնարկը վերանայելուց հետո (2009) կմեկնարկվի վարկային ծրագրի երկրորդ փուլը, որն իր մեջ կներառի նախորդ ծրագրի ընթացքում ձեռքբերված փորձը և գյուղատնտեսական շուկային ավելի շատ միջոցներ կտրամադրի (նախատեսվում է հատկացնել 5,500,000 ԱՄՆ դոլար):

Ջրի կառավարման կազմակերպությունների կառուցվածքային ամրապնդում

Տվյալ բաղադրիչը ՅՄՅ-Յայաստան ծրագրի կարևորագույններից է հանդիսանում: Բաղադրիչի իրականացումը և իր արտադրանքի ներդրումը Յայաստանի ջրային ոլորտում կապահովի վերանորոգված ոռոգման ենթակառուցվածքի երկարաժամկետ, պատշաճ օգտագործումը և ռացիոնալ կառավարումը: Բաղադրիչի նպատակն է բարեփոխումներ իրականացնել ջրի կառավարման ոլորտում ինչպես ջրօգտագործողների, այնպես էլ ազգային մակարդակով: 2008թ. օգոստոսին ՅՄՅ-Յայաստանը պայմանագիր է կնքել Եվրոքոնսալթ ՍոթՄաքդոնալդ

բրիտանական կազմակերպության հետ: Պայմանագիրը կիրականացվի մինչև ՅՄՅ-Յայաստան ծրագրի ավարտը (2011թ. սեպտեմբերի 11-ը): Պայմանագրի շրջանակներում հանրապետության ջրի կառավարման կազմակերպություններին կտրամադրվի ինչպես տեխնիկական աջակցություն, այնպես էլ համակարգչային սարքավորումներ:

2. Հանրության իրազեկման գործընթաց

Անփոփելի շահառուների, քաղաքագիական հասարակության ներկայացուցիչների, մասնավոր ոլորտի, դոնոր կազմակերպությունների հետ ընթացող հանրային իրազեկման գործընթացի սկզբունքային խնդիրները և արդյունքները: Առկայության դեպքում, առավել արդյունավետ համակարգման վերաբերյալ առաջարկություններ ներկայացրեք, օրինակ. բնապահպանական, սոցիալական գնահատման և/կամ գենդերային խնդիրների վերաբերյալ հանրային քննարկումների բնույթը և արդյունքը:

ՅՄՅ-Յայաստանը շարունակում է հանրության իրազեկման միջոցառումների շարքը: Հաշվետու ժամանակաշրջանում տպագրվել են չորս եռամսյակային տեղեկագրեր, որոնց մեջ մանրամասն ներկայացված են ՅՄՅ-Յայաստան ծրագրի միջոցառումները և նվաճումները: ՅՄՅ-Յայաստանի ինտերնետային կայքը www.mca.am շահագործվել է և արդիականացվել պարբերական հիմունքներով: Անց են կացվել բազմաթիվ արտագնա միջոցառումներ հանրապետության մարզերում և համայնքներում: Հաշվետու տարվա ընթացքում ՅՄՅ-Յայաստանի թիմը այցելել է անհատ շահառու ֆերմերների ցուցադրական տնտեսությունները, ներկա է եղել ուսուցման դասընթացներին, վարկային ծրագրերի անհատական ստուգումներ է իրականացրել: Արտագնա միջոցառումների կարևոր մաս են կազմում բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման շրջանակներում իրականացված հանդիպումները, որոնց ժամանակ գյուղաբնակ հասարակությունը հնարավորություն է ունեցել արտահայտել իրենց գովասանքը և մտահոգությունները ներկա և պլանավորված ծրագրերի վերաբերյալ: Գալիք տարվա ընթացքում ուշադրության հիմնական կենտրոնում լինելու են շինարարական աշխատանքները:

ՈԳԾ – Մինչ ինքնահոս համակարգերի, պոմպակայանների, մայր ջրանցքների, երրորդ կարգի ջրանցքների և ջրամբարների նախնական նախագծերի մշակումը, խորհրդատուները հանդիպումներ և քննարկումներ են ունեցել համապատասխան ՋՕԸ-ի, Ջրառ կազմակերպությունների, շահառու հայանքների և ֆերմերների հետ: Խորհրդատուները ներկայացնում էին և քննարկում շահառուների հետ ոռոգման ենթակառուցվածքի վերանորոգմանը և շինարարությանը առնչվող հիմնական խնդիրները, մասնավորապես ջրի կառավարման, հողատարածքների և մշակաբույսերի խնդիրները: Նախնական նախագծերը հետագայում ուսումնասիրվել են հիմնական շահառուների հետ և քննարկվել են և, համապատասխանության դեպքում, ընդունվել են իրենց առաջարկությունները և դիտարկումները: Երրորդ կարգի ջրանցքների փորձնական ծրագրի արդյունքներից ելնելով, ինչպես նաև նախագծերը առավել արդյունավետ մշակելու նպատակով, առաջարկվեց ակտիվորեն ներգրավել բոլոր շահառու ֆերմերներին՝ շինարարական աշխատանքների ընթացքում ջրթողների հետ կապված շփոթումներից խուսափելու նպատակով:

Բնապահպանական և սոցիալական ազդեցություն - Ծրագրի բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման շրջանակներում անցկացվեցին մի շարք հասարակական

խորհրդատվություններ ծրագրում ընդգրկված համայնքներում, որոնց նպատակն էր ծրագրում ներգրավված կողմերի հետ քննարկել բոլոր վեց մայր ջրանցքների և ինքնահոս համակարգերի վերականգման որոշ նախագծերի հետ կապված բնապահպանական և սոցիալական խնդիրները և լսել նրանց կարծիքները և արծազանքները քննարկվող հարցերի վերաբերյալ: Հանդիպումների ժամանակ ներկայացվեցին և քննարկվեցին ՀՄՀ-Հայաստան ծրագրի գործունեության ընդհանուր ներածական մասը, առաջարկվող վերականգնողական աշխատանքների մանրամասները, դրանց հնարավոր բացասական ազդեցությունը և առաջարկվող մեղմացման միջոցները, տեղական բնակչության համար ծրագրի աշխատանքների կարևորությունը և ակնկալվող արդյունքները:

Քաղաքացիական հասարակության ներգրավումը- Հաշվետու տարում շահառուների խորհուրդը, որպես ՀՄՀ-Հայաստանի խորհրդատու մարմին, շարունակեց իր գործունեությունը որոշումների ընդունման և խորհրդատվական գործունեության ոլորտում: Շե անդամներն ու ՀՄՀ-Հայաստանի թիմը տեղամասային այցելություններ էին կազմակերպում, ներկայացնում իրենց նկատողություններն ու առաջարկությունները իրականացվող աշխատանքների վերաբերյալ: Քանի որ Ջրից դեպի շուկա ծրագիրը ընտրված է որպես տարվա թիրախային ծրագիր, Շե-ի հիմնական ջանքերն ու աշխատանքները ուղղված էին հետևյալ ոլորտներին. հանդիպումներ իրականացնող կազմակերպությունների հետ, առանձին քննարկումներ և այցելություններ տեղամասեր: Շե անդամները ընդգրկվեցին նաև ՀՄՀ-Հայաստանի գնահատման հանձնաժողովներում՝ թե ծրագրային և թե աշխատակազմի ընտրություններում: Հաշվետու ժամանակաշրջանում կայացած Շե հանդիպումների քննարկման հիմնական առարկան էր Հայաստանի 2008թ ցուցանիշների սանդղակը և արդի բնապահպանական խնդիրները: Հիմնական խնդիրների վերաբերյալ իրենց տեսակետները ներկայացնելուց բացի, Շե անդամները հայտնեցին իրենց մտահոգությունը երկրի քաղաքական և սոցիալական զարգացումների վերաբերյալ, որոնք կարող են էապես ազդել երկրի ցուցանիշների վրա:

2008 թ. սեպտեմբերի 5ին ավելի քան 140 ներկայացուցիչների մասնակցությամբ կայացավ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ընդհանուր ժողովը: Ժողովին քննարկվեցին երրորդ տարվա շահառուների խորհրդի ընտրություններին վերաբերող հարցեր, հաստատվեցին ընտրական ընթացակարգն ու յոթանձնյա ընտրական կոմիտեն:

Շե նոր ընտրությունները կայացան 2008թ. սեպտեմբերի 27-ին: Ընտրությունների մասնակիցների քանակը գերազանցեց նախորդ տրվա ցուցանիշը՝ 365 համեմատած նախորդ տարվա 262, որը կարելի է գնահատել որպես լայն հասարակության ներկայացուցիչների կողմից ՀՄՀ-Հայաստանի ծրագիր քաղաքացիական հասարակությանը ներգրավելու նկատմամբ հետաքրքրվածություն և պարտավորություն: Շե 15 նորընտիր անդամներից 7-ը Հայաստանի գյուղական վայրերից են, իսկ 4-ը կանայք են՝ համեմատ նախորդ տարվա համապատասխանաբար 4:1 ցուցանիշին:

3. Կառավարության համաֆինանսավորում

[Նկարագրել կառավարության կողմից ՀՄՀ-Հայաստան ծրագրի իրականացմանն ուղղված համաֆինանսավորումը՝ որտեղ հարկ է նշելով դոյարային համարժեքը: Այն կարող է ներառել տարբեր տեսակի աջակցություն՝ ներառյալ դրամական միջոցները, ՀՄՀ-Հայաստանի իրականացման գրասենյակին աջակցելու նպատակով տրամադրված սարքավորումների ԱՄՆ դոլլարի համարժեքը, ինչպես նաև համաձայնագրում նշված Կառավարության այլ](#)

պարտավորվածությունները և պարտականությունները, ներառյալ բազմամյա ֆինանսական պլանում նշված նմանատիպ այլ աջակցությունը:

Հայաստանի Կառավարությունն ընդունել է հատուկ որոշում՝ համաֆինանսավորելու ԳՆՎԾ-ի առաջին փաթեթում ընդգրկված 273 կմ երկարությամբ ճանապարհային հատվածների շինարարության ծրագիրը: Ի պատասխան ԳՆՎԾ-ի առաջին փաթեթում ընդգրկված 2008 թ. շինարարական պայմանագրի ֆինանսավորումը հետաձգելու ՀՄԿ-ի որոշմանը՝ կապված 2008 թ. փետրվար-մարտ ամիսներին կատաղի բախումներին նախորդած քաղաքական իրարանցման հետ՝ ՀՀ Նախագահն ու Կառավարությունը առաջարկեցին 2008թ. շինարարության համար անհրաժեշտ գումարը հատկացնել պետական բյուջեից: Հատկացումը կազմեց 16, 800, 000 ԱՄՆ դոլար, որի շնորհիվ 2008թ. մարտին միջազգային մրցույթի եղանակով ընտրված կապալառուները կնքեցին պայմանագրերը և 2008 թ. օգոստոսին սկսեցին իրենց աշխատանքները:

4. Ծրագրի համակարգում այլ դոնոր կազմակերպությունների հետ

Նկարագրել ՀՄՀ-Հայաստան ծրագրի գործունեության համակարգումը ԱՄՆ-ի արտերկրյա աջակցության այլ ծրագրերի և այլ դոնոր երկրների կողմից տրամադրված աջակցության հետ: Դա կարող է ներառել այլ դոնորների կողմից տրամադրված համաֆինանսավորում՝ ծրագրի վերակազմավորման և ծախսերի վերահաշվարկի դեպքում:

ԳՆՎԾ - ԱՄՆ-ում ստեղծված մասնավոր Լինսի Հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում կառուցվեցին Արմավիր-Իսահակյան-Գյումրի ճանապարհային հատվածի ավտոմայրուղիները: Պատրաստի ճանապարհային նախագծերը և տրամադրվեցին Լինսի Հիմնադրամի կողմից: Բացի այդ, ՀՄՀ-Հայաստանը մի շարք հանդիպումներ ունեցավ Ասիական Ձարգացման Բանկի (ԱԶԲ), Համաշխարհային Բանկի, ԵՄԿ ներկայացուցիչների հետ, ծանոթացավ իրենց առաքելությանն ու քննարկեց ճանապարհների ցանցին վերաբերող խնդիրներն ու նախագծերը: ԱԶԲ-ի հետ մասնավորապես քննարկվեցին համայնքային ճանապարհների տեխնիկական և տնտեսական ցուցանիշները, ինչպես նաև դրանց նախագծման և շահագործման հարցերը: Հատուկ ուշադրության է նաև արժանի խորհրդատվական ծառայությունների կարգավորման մշակումը, որի նպատակն այն է, որ ծառայությունները ոչ թե համընկնեն կամ կրկնվեն, այլ լրացնեն միմյանց:

ՈԳԾ-ՀՄՀ-Հայաստանը համագործակցել է Համաշխարհային Բանկի Ոռոգման զարգացման ծրագրի հետ՝ երրորդ կարգի ջրանցքների վերականգման բաղադրիչի վերաբերյալ:

ՀՄՀ-Հայաստանը օգտագործեց ՈԳԾ-ի շրջանակներում պատրաստված նախագծերը հետևյալ չորս գյուղերում երրորդ կարգի ջրանցքների վերականգման համար՝ Արևշատ, Աբովյան, Լանջազատ և Գրիբոեդով: ՈԳԾ-ի կողմից կազմվեցին և ՀԲ-ի ներդրումների միջոցով կատարելագործվեցին ևս 16 երրորդ կարգի ջրանցքների նախագծեր, որոնք ներառվեցին ենթակառուցվածքային բաղադրիչի՝ երրորդ կարգի ջրանցքների նախագծման և վերակառուցման հսկողության ենթաբաղադրիչում:

Ջրից դեպի Շուկա- ACDI/VOCA (ծրագրի իրականացնող կազմակերպություն) և ԱՄԳԴ/ԱԳԶԿ համատեղ վարեցին սննդի ապահովության և հիգիենայի դասընթացը և տրամադրեցին տեխնիկական օգնություն՝ համաձայն “Սննդի արդյունաբերության տեխնիկական դասընթաց և

աջակցություն” ծրագրի: Աջակցությունը հիմնականում կայանում էր նրանում, որ ԱՄԳԴ մասնագետները ACIDI/VOCA-ի հետ համագործակցող սննդի տարբեր արդյունաբերողներին տրամադրում էին տեղամասային խորհրդատվություն և սննդի տեխնիկայի ցուցադրում: Ջրից դեպի շուկա բաղադրիչի վարկային ծրագիրը իրականացվում է Գյուղական ֆինանսավորման կառույցի միջոցով, որը հիմնադրվել է ՀԲ-ի և ԳԶՄՀ-ի համաֆինանսավորմամբ՝ գյուղական և գյուղատնտեսական վարկային համակարգի ամրապնդման նպատակով: Վարկային ծրագիրը համալրում է ՀԲ-ի և և ԳԶՄՀ-ի գործունեությունը, քանի որ այն օժանդակում է այն գյուղացիներին, որոնք իրենց նախկին արտադրանքը ընդլայնում են ՀՄՀ-Հայաստանի նոր ֆինանսավորմամբ: Ջրի կառավարման համակարգի կառուցվածքային ամրապնդման ծրագիրը կծավալի իր գործունեությունը՝ հիմք ընդունելով ՀԲ-ի կողմից ֆինանսավորված Ոռոգման Ձարգացման ծրագրի արդյունքները:

5. Պատմություններ գրանցված հաջողությունների վերաբերյալ. տեղադրված են կայքի «Առաջընթացի ցուցանիշներ» բաժնում: